ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Վեհափառ Կաթողիկոսը, չնայելով իւր ծանր տկարութեան, չնայելով ոմանց այն սարսափելի տգիտութեան արգասիքին, որի ականատես ենք մենք անբաղդաբար, դարձեալ գործունէութեան հիանալի օրինակ և դաս կտայ և փրկութեան ճանապարհ կհարթէ և կլուսաւորէ մեր տօնելի Հայրապետը խեղճ հայ ազգին, առանց վհատութեան և յուսահատութեան փափագելով և հոգալով հայկեան ազգի բարոյական և մտաւորական պէտքերը։ Իւր խօսքի համաձայն նա պատուիրեց մի կողմից ճեմարանի նոր ննջարանի շինութիւնը սկսել, միւս կողմից հրամայեց իւր հոգևոր որդի Խորէն Վարդապետ Ստեփանէին գնալ առ զգայուն Հայերն և հասկացնելով Վեհ. Հայրապետի ձեռնարկութեան վսեմ նպատակը, նոցա հրաւիրել օժանդակութեան։ Էջմիածնի մէջ շինութիւնն սկսվեցաւ և չնայելով կարճ ժամանակին և անլսելի թանկութեան, շինութիւնը բաւական յառաջ գնացած է։ Մինչև սեպտեմբեր ամսի 20ը եղած է ծախս շինութեան վերայ, որ ունի հիմերից 10 արշին բարձրութիւն, 124 արշին երկարութիւն իւր 14 սիւներով և 22 արշին լայնութիւն և բոլորը սրբատաշ քարից է։ 27,489 մանէթ 52 կոպէկ։ Իւրաքանչիւր օրը կաշխատեն 60 քարտաշ, օրական 3 մ. և 2 մ. 50 կ., և 150 մշակներ, երբեմն աւելի ևս, օրական 40 կպ. Կիրը կգնվէր 10 մանէթով խալվարը (30 պուդ)։ Միւս անգամ, երբ բոլոր աշխատութիւնը վերջացած կլինի, եղած ծախսերն յօդուածներով հրատարակելու ենք առաւել մանրամասնաբար։

Իսկ Խորէն վարդապետը պաշտելով Վեհափառ աղգաշէն Հայրապետի սուրը հրամանը այցելեց Գէորգեան ճեմարանի ամառնային արձակուրդի միջոցին, երկու ամսի ընթացքում, քանի մի քաղաքների Հայերին և իւր ճանապարհորդութեան արդիւնքը առանձին յայտարարութեամբ ներկայացրեց Վեհ. Կաթողիկոսին, որ տպվելու է «Արարատի» միւս տետրակում, նոյնպէս և նուիրատուների ազգանունները։ Այս անգամ բաւական կհամարվի յայտնելու, որ Թիֆլիսում կազմվեցաւ Մասնաժողով և սորա հայասէր անդամներն պարտաւորվեցան Վեհ. Հայրապետի առաջ նշանաւոր գումար մի հանգանակել Թիֆլիսի մէջ։ Իսկ Վլադիկավկազի, Արմաւիրի, Մօսկվայի, Նիժնու տօնավաճառին գտնված և Պետերբուրգի Հայերն ամենայն համակրութեամբ արձագանգ տուին Վեհափառ Աղգապետի հայրենասիրական կանչին և նուիրեցին յօդուտ ճեմարանի շինութեան մօտ 10 հազար մանէթ, իսկ Նոր-Նախիջևանի մէջ սկսվեցաւ հանգանակութիւնը և կըշարունակվի, պատուական քաղաքացիներին խոստանալով առ նուազն 1000 մանէթ հանգանակել։

Սա է Թիֆլիսի Մասնաժողովի պատուական անդամների գրութիւնն առ Վեհ. Հայրապետը։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ,

Ամենապատուական Կոնդակն Ձերդ Վեհափառութեան, որք բովանդակէին զպատուէր Ձեր հանդերձ Հայրապետական օրհնութեամբ, բարեբաղդ գտաք ստանալ յիւրում ժամու։ Իսկ եթէ յապաղեցաք ի կատար ածել զոր ինչ յանձն արարեալ էր մեզ Ձերդ Սուրբ Օծութիւն, այնմ արգելք եղեն ինչ ինչ հանգամանք, յորոց միջի ոչ վերջինն էին բազմութիւնք հանգանակութեանց եղելոց ի քաղաքիս։

Իսկ արդ յաւուրս յայսոսիկ հրամանաւ և Կոնդակաւ Ձեր Վեհափառութեան եկն եհաս ի քաղաքս Խորէն վարդապետ Ստեփանէ, որ մատուցեալ զօրհնութիւն և զողջոյն Հայրապետական Ձերդ Վեհափառութեան իւրաքանչիւրում ուրոյն ուրոյն և յայտնելով մեզ զսկզբնաւորութենէ շինութեան նորոյ Ննջարանի և սեղանատան Ճեմարանիդ, խօսեցաւ ընդ մեզ յորդորանօք առ ի կատարել զյանձնարարութիւն Ձեր և հրաւիրեաց զմեզ սկիզբն առնել գործոյն։

Եւ մեք ուրախացեալ յոյժ զի Վեհափառ Տէրդ ցանկայք աւարտել յայսմ ամի զէթ զներքին յարկն շինութեանն, յորմէ ազգ մեր ակնկալու զարժանաւոր սպասաւորս եկեղեցւոյ և զօգտաւէտ պաշտօնեայս ազգի, փութացաք կազմել զՄասնաժողովն և ի Կ ամսոյ արարաք զառաջին Նիստ Մասնաժողովոյս։ Ի Նստի անդ ի միտ առեալ զկարևորութիւն օժանդակութեան ի պէտս շինութեան Ննջարանի և սեղանատան, որոշեցաք, առ բացակայութեան երկուց յանդամոց մերոց, այն է բժշկապետ Յովհաննիսեանւոյ ի Բորժօմ և Պ. Ղորղանեանի յայնկոյս ծովուն Կասպեայ, այլև այնոցիկ ամենեցուն, որք կարողք են նպաստամատոյց լինել այսմ, սկսել զհանգանակութիւնն յամսեանն սեպտեմբերի յորժամ վերադարձցին ամենքին և մեք ընդ նոսա, զի և մեք ահա ճանապարհորդեմք։ Եւ զայս որոշումն արարաք, Վեհափառ Տէր, վասն այնր, զի Տեառն յաջողութեամբ յամսեանն սեպտեմբերի մարթասցուք հանգանակել զգումար մի, որ փոքր ի շատէ համեմատ լիցի հոյակապ նպատակի, առ որ հանգանակի, փառաւոր Անուան մեծագործ ազգասէր Հայրապետիդ և քաղաքիս մերոյ։

Յոյր սակս կարևոր վարկաք, ըստ առաջարկութեան Խորէն վարդապետի, գրութեամբս մերով պարտաւորեալ առաջի Մեծի Հայրապետիդ հաղորդել զսկզբնաւորութենէ Մասնաժողովոյս և զորոշմանէ սորին ի գիտութիւն և ի միամտութիւն Ձերդ Սուրբ Օծութեան և ի խրախոյս Նուիրակի Վեհափառ Տէրութեան Ձերոյ, որ քաջալերեալ յաջողութեամբ գործոյն սկզբաւորութեանն ի քաղաքիս, շարունակեսցէ զճանապարհորդութիւն իւր ըստ սուրբ հրամանի Վեհափառութեան Ձերոյ։

Այլ և հարկ համարիմք յայտնել Վեհափառ Տեառնդ մերում, զի զուցէ թէ ի վերջին աւուրս յառաջիկայ ամսեանն սեպտեմբերի Մանաժողովս կարեւոր և անհրաժեշտ համարեսցի զներկայութիւն Խորէն վարդապետի, ուստի թէպէտ և յընթացս շարունակութեան դասուց ի Ճեմարանին, Մանաժողովս ունի խոնարհաբար խնդրել ի Վեհափառութենէ Ձերմէ հրաման տալ նմա գալ այսր աւուրբք հնգետասանիւք։

Ամենախորին որդիական ակնածութեամբ մատչիմք ի համբոյր սրբոյ Աջոյդ և բարեբաղդ զանձինս համարիմք լինել կատարեալ հաւատարմութեամբ նախանձախնդիրք աւարտման բարենպատակ և ազգօգուտ ձեռնարկեալ գործոյդ։

Ձերդին Վեհափառ Տէրութեան

Խոնարհ ծառայք եւ որդիք

Ի քաղաքն Տփխիս.

Ի 10 յուլիսի 1879 ամի.

Յարութիւն Յովհաննիսեանի

Ալէքսանդր Մանթաշեան

Յովհաննէս Զիթախեան

Մելքոմ Լոմիզէ.

Այս անգամ կհրատարակենք Գէորգեան Ճեմարանի առարկաների և դասերի քանակութիւնը և աշակերտների պարապմունքի ժամերը, նոյնպէս և ուսուցիչների թիւը և նոցա ստացած ռոճիկները։ Միւս անգամ հրատարակելու ենք առարկաների համառօտ սահմաններն (պրօգրամներ) իւրաքանչիւր դասարանի համար.

Գ. Ճեմարանում այս տարին բացվեցաւ վեցերորդ գպրանոցական վերջին դասարան. Սեպտեմբերի մինից Ճեմարանում կային կրկնաքննութիւններ և քննութիւն ընական պատմութենից. Դասերն սկսվեցան սեպտեմբերի 11ին։ Նախընթաց երկուշաբաթի օրն կատարվեցաւ մաղթանք, որից յետոյ ուսուցչական ժողովի քարտուղարը յորդորական բան խօսեց աշակերտներին, յիշեցնելով նոցա իւրեանց պարտքերը և հայկական ժողովրդի ակնկալութիւնները, շնորհաւորելով նոցա դպրոցական տարվան և նոր աշխատութեան սկիզբը, և հաղորդելով աշակերտներին քննութիւնների հետեւանքը, յայտնեց աշակերտների ուսման և բարքի վերաբերմամբ կայացած ուսուցչական ժողովի վճիռները. Աշակերտներն մեծ մասամբ փոխեցին դասարաններ. Մնացին միայն 1 աշակերտ առաջին դասարանում, մին-երկրորդում, երկուքն-երրորդում, չորսը-հինգերորդում. Հինգերորդում մնացած չորսից երկուքըն արձակվեցան, մինն ես արձակվեցաւ երրորդ դասարանից յետադիմութեան պատճառով. Այժմ I. դասարանում կան 20 աշակերտ, II. դասարանում 24 աշակերտ, III. դասարանում 24 աշակերտ, IV. դասարանում 20 աշակերտ, V. դասարանում 14 աշակերտ և VI. դասարանում 13 աշակերտ. Բոլորն 115 աշակերտ.

Գէորգեան Ճեմարանի մէջ աւանդելի առարկաներ և շաբաթական դասերի քանակութիւն գպրանոցական վեց դասարանների մէջ.

Ա. Դասարան:

Կրօն — 3 դաս
Հայկական լեզու — 5 դաս
Ռուսական լեզու — 5 դաս
Թուաբանութիւն — 4 դաս
Բնական պատմ. սկզբունք — 2 դաս
Աշխարհագրութիւն — 2 դաս
Վայելչագր. հայ. և ռուս. — 4 դաս
Գծագրութիւն — 1 դաս
Ձայնագրութիւն — 4 դաս

50 դաս:

Բ. Դասարան:

Կրօն — 3 դաս
Հայկական լեզու — 5 դաս
Ռուսական լեզու — 5 դաս
Ֆրանսական լեզու — 4 դաս
Թուաբանութիւն — 4 դաս
Հայաստանի արդի
աշխարհագրութիւն — 1 դաս
Բնական պատմութիւն — 3 դաս
Ընդհան. աշխարհագր. — 2 դաս
Վայելչագր. ռուս. և հայ. — 3 դաս

50 դաս

Ձայնագր. 4 դաս ճաշից յետոյ.

Գ. Դասարան:

Կրօն — 3 դաս
Հայկական լեզու — 4 դաս
Ռուսական լեզու — 4 դաս
Ֆրանսական լեզու — 4 դաս
Հայկական պատմութիւն — 3 դաս
Ընդհան. աշխարհագր. — 3 դաս
Մատեմատիկա — 3 դաս
Բնական պատմութիւն — 3 դաս
Նկարչութիւն — 3 դաս

50 դաս:

Ձայնագր. — 3 դաս ճաշից յետոյ.

Դ. Դասարան:

Կրօն — 3 դաս
Հայկական լեզու — 4 դաս
Ռուսական լեզու — 3 դաս
Ֆրանսական լեզու — 4 դաս
Հայկական պատմութիւն — 3 դաս
Ընդհանուր պատմութիւն — 3 դաս
Ռուսիայի աշխարհագր. — 2 դաս
Ռուսիայի պատմութիւն — 1 դաս
Մատեմատիկա — 4 դաս
Նկարչութիւն — 3 դաս

50 դաս:

Ե. Դասարան:

Կրօն — 3 դաս
Հայ. մատենագրութիւն — 4 դաս
Ռուսական լեզու — 4 դաս
Ֆրանսական լեզու — 3 դաս
Բնագիտութիւն — 3 դաս
Մատեմատիկա — 3 դաս
Եկեղեցական պատմութիւն — 2 դաս
Ընդհանուր պատմութիւն — 3 դաս
Ռուսիայի պատմութիւն — 1 դաս
Նկարչութիւն — 2 դաս
Տրամաբանութիւն — 2 դաս

50 դաս:

Զ. Դասարան:

Կրօն — 3 դաս
Հայ. մատենագրութիւն — 3 դաս
Հայերէն շարադրութիւն — 1 դաս
Ռուսական լեզու — 3 դաս
Ֆրանսական լեզու — 3 դաս
Բնագիտութիւն — 3 դաս
Մատեմատիկա — 3 դաս
Տիեզերագրութիւն — 2 դաս
Ընդհանուր պատմութիւն — 2 դաս
Եկեղեցական պատմութիւն — 2 դաս
Աստուածպաշտութեան կարգ և
տօմարագիտութիւն — 1 դաս
Առողջապահութիւն — 2 դաս
Նկարչութիւն — 2 դաս

դաս 50:

Կրօն — 18 դաս Աստուածպաշտութեան կարգ և տօմարագիտութիւն — 1 դաս 19	Ուսուցիչն է Սերովբէ Եպիսկոպոս Արարատեան։ Ռոճիկը — 600 մանէթ։ (Սնունդը վանքից ունի և կստանայ նոյնպէս 240 ման. Վեհ. Կաթողիկոսի կոնդակներ գրելու)։
Հայկական լեզու — 19 դաս Տրամաբանութիւն — 2 դաս 21	
Ռուսական լեզու — 24 դաս Ռուսիայի աշխարհագրութ. — 2 դաս 26	Ուսուցիչն է Վարդան Արովեան։ Ռոճիկը — 1900 մանէթ։
Ֆրանսական լեզու — 18 դաս Ռուսիայի պատմութիւն — 2 դաս Ընդհանուր պատմութիւն 6 դաս 26	Ուսուցիչն է Խորէն Վարդապետ Ստեփանէ։ Ռոճիկը — 1000 մանէթ։ (Հայր Խորէն կվարէ և ուսուցչական ժողովի քարտուղարի պաշտօն)։
Հայ. մատենագր. պատմ. — 6 դաս Հայաստանի պատմութիւն և արդի աշխարհագրութիւն — 7 դաս Հայ. Եկեղեց. պատմ. — 4 դաս 17	Ուսուցիչն է Կարապետ Կոստանեան։ Ռոճիկը — 1450 մանէթ։ (Պ. Կոստանեան կստանայ նոյնպէս վանքից վայելուչ բնակարան գիւղում անվարձ)։
Ընդհանուր աշխարհագրութ. — 7 դաս	Ուսուցիչն է Բարսեղ Բաստամեան։ Նոյն և վերակացու։ Ռոճիկը — 900 մանէթ։
Մատեմատիկա — 21 դաս Տիեզերագրութիւն — 2 դաս 23	Ուսուցիչն է Մարտիրոս Սիմէոնեան։ Ռոճիկը — 2100 մանէթ։
Բնական պատմութիւն — 8 դաս Առողջապահութիւն — 2 դաս Բնագիտութիւն — 6 դաս 16	Ուսուցիչն է Գրիգոր Տէր Գրիգորեան։ Նոյն և բժիշկ։ Ռոճիկը — 2000 մանէթ։ (Պ. Տէր Գրիգորեան իբրև բժիշկ վանքից կստանայ 300 մանէթ առանձին)։
Նկարչութիւն և գծագր. — 11 դաս	Ուսուցիչն է Առաքել Սագինեան։ Ռոճիկը — 660 մանէթ։ (Վանքից կստանայ բնակարան։ հաց։ պանիր։ իւղ։)։
Կրթութիւն Երգեցողութեան	Ուսուցիչն է Մաքսուտ Կարապետեան։ Ռոճիկը — 360 մանէթ։ (Վանքից կստանայ բնակարան և սնունդ։ Նոյն հաշուով կուսուցանէ ձայնագրութիւն վանքի դպրոցում)։
Ձայնագրութիւն — 11 դաս	Ուսուցիչն է Սահակ սարկ. Ամատունի։
Վայելչագրութիւն — 7 դաս	Ուսուցիչն է Մարտիրոս Քէրէստեճեան։ Նոյն և ճեմարանի վարչութեան քարտուղար։ Ռոճիկը — 820 մանէթ։
Տաճկերէն — 6 դաս Տաճկերէն կսովորեն միայն Թիւրքահպատակ աշակերտներն և կամաւոր ցանկացողները։	Ուսուցիչն է Գարեգին Փայլակեան։ Ռոճիկը — 400 մանէթ։ (Վանքից կստանայ բնակարան և սնունդ)։

Ճեմարանի վերակացուներն են.

Սողոմոն Աբամելիքեան. Ռոճիկը — 900 մանէթ, (նոյն հաշուով թուաբանութիւն կուսուցանէ վանքի դպրոցում).

Աստուածատուր Աստուածատրեան. Ռոճիկը — 600 մանէթ, (նոյն հաշուով ռուսական լեզու կուսուցանէ վանքի դպրոցում).

Բարսեղ Բաստամեան (վերև յիշվեցաւ). Ռոճիկը 900 մանէթ, (նոյն հաշուով ընդհանուր աշխարհագրութիւն կուսուցանէ ճեմարանում).

Գէորգեան ճեմարանի աշակերտների ամենօրեայ պարապմունքի ժամերը.

Առաւօտեան	Ճաշից յետոյ
5½ ժամին կզարթնեն.	
½ — պատրաստութիւն.	3 ժամից 4 սերտողութիւն և դասախօսութիւն տաճկերէն.
6 — կաղօթեն.	¼ — հանգիստ.
6 — 7 դասերի սերտողութիւն.	4¼ — 5¼ սերտողութիւն.
7 — թէյ.	¼ — հանգիստ.
8 — 8⁵⁵ I. դաս.	5½ — 6½ սերտողութիւն.
10 րոպէ հանգիստ.	¼ — հանգիստ.
9⁵ — 10 II. դաս.	6¾ — 7¾ սերտողութիւն.
30 րոպէ նախաճաշ և հանգիստ.	¼ — հանգիստ.
10 — 11⁵⁵ III. դաս.	8 — կրնթրեն.
10 րոպէ հանգիստ.	9 — կաղօթեն.
11⁵⁵ — 12¹⁰ IV. դաս.	9¼ — կքնեն.
10 րոպէ հանգիստ.	
12⁴⁰ — 1¹⁵ V. դաս.	
1¹⁵ ճաշ.	

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց վերադառնալ Բիւրական ամարանոցից Ս. Էջմիածին սեպտեմբերի 12-ին շաբաթ օրը. Վերադարձի ճանապարհը Նորին Ս. Օծութիւնը, չնայելով իւր տկար դրութեանը, ուղղած էր Օշական գիւղի վերայ, որտեղ բարեհաճեց տեսնել Ս. Մեսրոպի գերեզմանի վերայ կառուցված եկեղեցին, որը նոր ահա շինվեցաւ Վեհ. Կաթողիկոսի հրամանով հանգանակված փողով և աւարտվելու վերայ է. Վերջապէս հայկեան ժողովուրդը սուրբ Մեսրոպին, հայկական այբուբենի հնարողին, ուրեմն հայ ազգութեան կենդանութեան ստեղծողներից մինին գլուխը դնելու արժանավայել տեղ պատրաստեց Հայաստանի մէջ. Բայց սորա համար հարկաւոր էր որ մօտ 14 դար ժամանակ անցնէր և Վեհ. Գէորգ Գ.ը Հայրապետ լինէր . . .

Շնորհակալութեամբ կյայտնենք, որ մոզդոկեցի բարեդաշտ Մակար Ուլուխանեան ընծայեց Մ. Աթոռիս Սուրբ տաճարին ոսկեզօծ արծաթապատ փրկչական պատկեր.

Սինոդի կառավարչական մասն իւր գրութեամբ սեպտեմբերի 21-ից կառաջարկէ «Արարատի» խմբագրութեանը ծանուցանել Երևանի վիճակի եկեղեցականներին, որ Վեհափառ Կաթողիկոսի բարեհաճ կամքին համաձայն

և Սինոդի տնօրէնութեամբ Երևանի թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը ներկայ ուսումնարանական տարվան սկզբից սահմանած է բանալ Երևանի թեմական դպրանոցում առանձին դասատուն, որտեղ Երևանի վիճակի եկեղեցականներից ցանկացող անձները կարող են մտնել և սովորել կարևոր առարկաներ և դասախօսութեան եղանակը և կատարելագործվելուց յետոյ դասեր տալ հայ եկեղեցական դպրոցներում։ Ուսման վարձը որոշած է հոգաբարձութիւնը ստանալ իւրաքանչիւր ուսանողից տարին 30 մանէթ։

«Արարատը» հրատարակելով Երևանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան այս օգտաւէտ կարգադրութիւնը կյորդորէ եկեղեցական ուսուցչացուներին օգուտ քաղել այս հանգամանքից և փոքր ի շատէ գոնէ պատրաստվել ուսուցչութեան համար։

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ պ. Տէր Աբրահամեանից իւր հեղինակած «Համառօտ պատմութիւն Հայոց» գիրքը, որ նշանակված է աշակերտների համար։ Պատմութեան բովանդակութիւնը նոյն է ի հարկէ, ինչ որ ուրիշ նոյն տեսակ գրողներ գրած են, միայն սա պատկերազարդ է. 24 վիմատիպ պատկերներ ունի, որոնք կհեշտացնեն նկարագրութիւնները։ Գիրքը տպված է երրորդ տպագրութեամբ Ռօստովում։ Պ. Տէր Աբրահամեանը չափազանց շտապել է յունիս ամսին գրքին վերայ յետագայ տարվան 1880 թիւը տպելու։ Թուղթը լաւ է և տառերն խոշոր։ Գինը 1 մանէթ է։

Շնորհակալութեամբ ստացանք «Մշակի» խմբագրողից մարտի 11 ին Թիֆլիսում կարդացած իւր հրապարակական դասախօսութիւն գերմաներէն «Die Ökonomische Lage der Armenier in der Türkei. Öffentlicher Fortrag in armenischer Sprache»։ Դասախօսութիւնը թարգմանած է գերմաներէն պ. Ամիրխանեան և տպված է Պէտէրբուրգում Գիտութիւնների կայսերական Ճեմարանի տպարանում։ Այս երևոյթն ուրախալի և օգտաւէտ է ի հարկէ, եթէ միայն գրքոյկը տարածվի Գերմանիայում կամ գերմաներէն իմացողների մէջ Ռուսիայում։ Առաջին մասում դասախօսը չափազանցօրէն կգովաբանէ հայազն կանանց։ Երկրորդ մասն առաւել հաւանելի է, որտեղ դասախօսը յիշելով հայկական բնաւորութեան արժանաւոր յատկութիւններ (ստրկութեան չենթարկվելը, վաղագոյն քրիստոնէութիւն ընդունելը և այլն) իրաւամբ անգոհունակութիւն կյայտնէ Բէռլինի դեսպանաժողովի ապարդիւնաւորութեան մասին Հայերի վերաբերմամբ։ Գրքոյկի թուղթը և տպագրութիւնը շատ լաւ են։ Գինը 25 կոպէկ է։ Բայց ի՞նչի Գրիգոր անունը գերմաներէն Կրիկոր է փոխվել։

Շնորհակալութեամբ ստացանք արժ. Ստեփանոս ա. ք. Տէր Ստեփանեանից իւր աշխատասիրած «Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» անունով գիրքը, որ աշխատասիրած է ծբխական եկեղեցական դպրոցների և միջնակարգ դպրոցների առաջին դասա-

բանների համար։ Գիրքը տպված է 1878 թուին Թիֆլիսում, բայց ափսոս որ այժմ նոր հասաւ մեր ձեռը։ Մեզ այնքան փափագելի էր այս գրքի հրատարակութիւնը հայերէն, որ դեռ ևս Բազուի մէջ սկսեցինք հատուածաբար «Հայկական Աշխարհ» օրագրում տպել, և այժմ ուրախ ենք, որ արժ. հայր Տէր Ստեփանեանն ընծայել է հայազն մանուկներին այս օգտաւէտ և ընտիր աշխատասիրութիւնը, փոխելով նորան ռուսազն Դիմիտրի ա. ք. Սոկոլովի հեղինակութենից, որ հմուտ մանկավարժ լինելով, առաջինն կարօղացաւ կրօնի պէս վսեմ առարկան, արժ. հայր Տէր Ստեփանեանի խօսքով, մատչելի անել մանկական հասկացողութեանը։ Գիրքն ունի 182 երես և կպարունակէ իւր մէջ հին և նոր կտակարանի սրբազան պատմութիւն, քրիստոնէական կրօնի և բարոյականութեան վարդապետութիւն, այլև մասնաւոր տեղեկութիւններ Հայաստանի մէջ քրիստոնէութեան յաղթական տարածման։ Գրիգոր Լուսաւորչի, սուրբ գրքի և հաւատի հանգանակի մասին։ Տպված են նոյնպէս ամենակարևոր աղօթքներ։ Նախ գրաբար և նորա դէմ աշխարհաբար թարգմանութիւնը։ Աշխատասիրութեան գլխաւոր արժանաւորութիւններից մինն նորա պատկերներ են, որոնց կապարները ստացած է արժ. աշխատասիրողը նոյն ինքն ռուսազն հեղինակից, Պետերբուրգից։ Պատկերները բազմաթիւ են։ Բովանդակութիւնը դաս դաս բաժանված է, բոլորն 88 դաս է։ Թուղթն և տպագրութիւնը ընտիր են։ Գինը 50 կոպ. է։ Շնորհակալութիւն յայտնելով արժ. աշխատասիրող հօրն այս ընտիր հեղինակութիւնը հայերէն փոխելուն համար, նոյնպէս և կեդրոնական դրավաճառանոցին հրատարակելուն համար, կցանկանք, որ այս նպատակայարմար աշխատասիրութիւնը տարածվի մեր դպրոցների մէջ։

Սեպտեմբեր ամսիս 29ին մեծ և արժանավայել հանդէսով տօնեց Ս. Էջմիածինն իւր Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան տօնը, Գէորգեան ճեմարանի բացման տարեդարձի հետ։ Ուրբաթ երեկոյին Վեհափառ Տէրը շքեղ հանդէսով բարեհաճեց իջնել Ս. Տաճարը նախատօնակին ներկայ լինելու։ Միւս օրը առաւօտեան ժամասացութենից յետոյ բոլոր միաբանութիւնն և աշակերտներն և ժողովուրդը նոցա հետ, Վեհարանի արևմտեան կողմն խմբված, մաղթանք մատուցին ի պատիւ Վեհափառ Կաթողիկոսի, որտեղ երկու աշակերտներ յարմարաւոր ճառեր կարդացին։ Այնուհետև բաղդ ունեցան ամենքն շնորհաւորելու իւրեանց տօնելի Հայրապետին տօնը ամենախորին ակնածութեամբ մատչելով ի համբոյր Ս. Աջին Վեհափառ Կաթողիկոսի։ Նախ միաբանութիւնը, յետոյ աշակերտներն ուսուցիչների հետ, յետոյ ժողովուրդը և ապա Վաղարշապատի երկսեռ դպրոցների աշակերտուհիներ և աշակերտներ իւրեանց նորընտիր վարժուհով և ուսուցիչներով։ Վարժուհին և մի աշակերտուհին ճառեր կարդացին։ Վեհափառ Հայրապետը սիրալիր համակրական խօսքերով և Հայրապետական օրհնութեամբ կմխիթարէր և կարձակէր ամենքին։ Հանդիսաւոր ս. պատարագից յետոյ ս. Էջմիածնի միաբանական ուխտը շուրջառներ առած, խաչով և

ամենայն զարդերով, և ժողովուրդը նոցա հետ, գնացին ճեմարան, ուր ա-ռաջ հիւսիսային կողմից կատարվեցաւ հոգեհանգիստ Վեհափառ Հիմնադրի ծնողների համար։ Յետոյ ճեմարանի կառավարիչ արք. Անդրէաս Արքե-պիսկոպոսը ճառ կարդաց շնորհաւորելով ճեմարանի բացման տարեդարձը և համառօտապէս յայտնելով ճեմարանի ներկայ դրութիւնը։ Ըստ կարգա-դրութեանն խօսեց նոյնպէս Խորէն Վ. Ստեփանէն, բացատրելով նոյն տօնի նշանակութիւնը։ Աշակերտների երգերով վերջացաւ հանդէսը։ Վանքի մէջ պատրաստված էր վայելուչ ճաշ միաբանութեան և հիւրերի համար, իսկ ճեմարանում—աշակերտների և ուսուցիչների համար։ Նոյն երեկոյեան Վանքի մէջ հրագալոյց կար և ժողովուրդը, մանաւանդ այս տարի մեծ բազմութեամբ եկած ուխտաւորները, մինչև 9 ժամ կզբօսնէին։ Ի շնորհաւո-րութիւն տօնի նոյն և հետևեալ օրը բազմաթիւ հեռագրեր հասան զանա-զան քաղաքներից առ Վեհափառ Կաթողիկոսը։

Վեհափառ Կաթողիկոսը շնորհած է նախընթաց վերջին ամիսներում հետևեալ Կոնդակներ։

Կոնդակ Մեծ Կարաքիլիսայ գիւղի պատգամաւորներին Ս. Տէր Յարու-թիւնեանին, Ա. Ճարրաթեանին, Յ. Աբովեանին, Կ. Յարութիւնեանին, Գ. Իզգարեանին և Յ. Ամիրբեգեանին, որով կ'թոյլատրէ օրիորդական դպրոց հիմնել։ Յունիսի 2, 1879 Թ. № 274.

Կոնդակ Խորէն Վարդապետ Ստեփանէին, որով կպատուիրէ ամառնային միջոցում գնալ Թիֆլիս, Մոսկվա և Պետերբուրգ կամաւոր նուէրներ հան-գանակելու յօգուտ Գէորգեան ճեմարանի նոր ննջարանի շինութեան։ Յունիսի 7, 1879 Թ. № 285.

Կոնդակ Մեծարգոյ Գէորգ Զուխաճեանին, որով կնշանակէ նորան Տիգ-րանակերտում գտնված Էջմիածնական կալուածների վերատեսուչ և նոյն վիճակում Էջմիածնի անունով հաւաքվելի գանձանակագրամների համար գանձապետ։ Մեծայոյս ենք որ մեծարգոյ պ. Զուխաճեանն իւր ջերմեռանդու-թեան և զգացմունքի համեմատ պիտի աշխատի արդիւնաւորել Վեհ. Հայ-րապետից յանձնված իւր նոր պաշտօնը և նպաստամատոյց պիտի հանդի-սանայ իւր հաւատարմութեամբ Մայր Աթոռիս և Գէորգեան ճեմարանի բազմածախս պիտոյքներին, վայելելով Վեհափառ Հայրապետի օրհնութիւ-նը։ Պ. Զուխաճեանին ուղարկված են Սինոդից վաւերացած երկու տոմար-ներ. մինում պիտի նշանակէ կալուածների արդիւնքը, միւսում—գանձանա-կագրամները և իւրաքանչիւր տարվան վերջը պիտի ուղարկէ բոլոր արդիւն-քը Վեհ. Հայրապետի կամ Սինոդի անունով։ Յունիսի 15, 1879 Թ, № 399.

Կոնդակ Լևոն Տիգրանեանին, Ռուբէն Ջալալեանին, Վարդան Եղիազա-րեանին, Բարսեղ Գեղամեանին, Վասակ Պապաջանեանին և Պօղոս Պօղո-սեանին, որով կհաստատէ նոցա Երևանի Թեմական Դպրանոցի հոգաբար-ձութեան պաշտօնում։ Յունիսի 29, 1879 Թ, № 308.

Կոնդակ, որով կնշանակէ Ապարանի վիճակի Սաղլու գիւղում ծխական

դպրոց նոր կառուցանելու և կառավարելու համար հոգաբարձուներ Ա. Ասլանեան, Մ. Գրիգորեան և Գ. Մանուկեան։ Յուլիսի 13, 1879, № 327։

Կոնդակ, որով կհաստատէ Ապարանի Դամջըլու գիւղում ծխական դպրոց նոր կառուցանելու և կառավարելու համար հոգաբարձուներ Հ. Գէորգեան, Հ. Մարգարեան, Հ. Ենգիբարեան և Յ. Մուրատեան։ Յուլիսի 13, 1879, № 328։

Կոնդակ, որով կհաստատէ Ապարանի Ղարաբուլաղ, Աստուածընկալ, և Նորաշէն գիւղերում, Ղարաբուլաղ գիւղը կեդրոն ունենալով, նոր դպրոց կառուցանելու և կառավարելու համար հոգաբարձուներ Ա. Մանուկեան, Մ. Սաֆարեան, Ս. Սահրատեան, Խ. Այվազեան և Ա. Մելքոնեան։ Յուլիսի 13, 1879, № 329։

Կոնդակ, որով կհաստատէ Պ. Յովհաննէս Տէր Գրիգորեանին Արցախի (Ղարաբաղի) վիճակի Թեմական Վերատեսուչ։ Յուլիսի 28, 1879, № 347։

Կոնդակ, որով կհաստատէ Գորի քաղաքի երկսեռեան դպրոցների հոգաբարձուներ Եղիշէ քահ. Սահակեան, Յակ. Ղուզանեան, Գր. Դաւթեան, Յակ. Ջաղունեան և Յով. Օքրոյեան։ Յուլիսի, 28 1879, № 328։

Կոնդակ օրհնութեան Յովհաննէս Պօպօվեանին, որ Խորէն Վ. Ստեփանէի յորդորանքով նուիրած է 200 մ. յօգուտ Ճեմարանի նոր շինութեան։ Օգոստոսի 17, 1879, № 377։

Կոնդակ, որով կհաստատէ հոգաբարձուներ Ալէքսանդրօպօլի վիճակի Բամբակի մասի Նալբանդլու գիւղում նոր դպրոց բանալու և կառավարելու համար Յովհ. քահ. Աղէքսանդրեան, Թ. Տէր Դաւթեան, Ն. Մանուկեան և Պ. Կիրակոսեան։ Օգոստոսի 17, 1879, № 378։

Կոնդակ, որով կհաստատէ Ապարանի վիճակի Ալիքուչակ գիւղում նոր դպրոց բանալու և կառավարելու համար հոգաբարձուներ. Յակոբ քահ. Սաղաթէլեան, Գ. Յովհանէսեան և Թ. Գրիգորեան։ Օգոստ. 17, 1879, № 380։

Կոնդակ, որով կհաստատէ հոգաբարձուներ Բաղարջըք գիւղում նոր դպրոց բանալու և կառավարելու համար Դ. Միքայէլեան, Մ. Տէր Յովհաննէսեան, Գ. Դոնօյեան, Ն. Բեգըյեան և Յ. Ենգօյեան։ Օգոստ. 17, 1879, № 381։

Կոնդակ, որով կհաստատէ հոգաբարձուներ Հիրաղալա, Թաքեալու և Ղազանֆար գիւղերում, վերջինը կեդրոն ունենալով, նոր դպրոց բանալու և կառավարելու համար Ղ. Գրիգորեան, Վ. Սահակեան, Դ. Այվազեան, Ս. Մելիքեան, Հ. Խաչատուրեան և Ա. Մարտիրոսեան։ Օգոստ. 17, 1879, № 382։

Կոնդակ, որով կհաստատէ Ձեամբոլու գիւղում հոգաբարձուներ նոր դպրոց բանալու և կառավարելու Եփ. քահ. Յարութիւնեան, Յ. Մխիթարեան, Ա. Յարութիւնեան, Ք. Գէորգեան, Խ. Գրիգորեան և Յ. Գրիգորեան։ Օգոս. 17, 1879, № 383։

Կոնդակ, որով կհաստատէ Ղալաջի գիւղում նոր դպրոց բանալու և կառավարելու հոգաբարձուներ Բ. Սաղաթէլեան, Հ. Այվազեան և Մ.

Ա. Յովաղեան։ Օգոստ. 17։ 1879։ № 384։

Կոնդակ։ որով կհաստատէ հոգաբարձուներ Բլխէր գիւղում նոր դպրոց կառուցանելու և կառավարելու Գ. Յովսէփեան։ Յ. Մկրտչեան։ Բ. Ասլանեան և Խ. Ալէքեան։ Օգոստ. 17։ 1879։ № 385։

Կոնդակ։ որով կհաստատէ Յաֆինա գիւղում նոր դպրոց կառուցանելու և կառավարելու հոգաբարձուներ Յակ. քահ. Ղևոնդեան։ Մ. Գասպարեան։ Բ. Թոմասեան և Յ. Յովնանեան։ Օգոստ. 17։ 1879։ № 386։

Կոնդակ օրհնութեան Պօղոս-քիլիսեցի Յով. Կիրակոսեանին Մեծ Ղարաքիլիսա գիւղի ծխական դպրոցին 200 մ. նուիրելու համար։ Օգոստ. 30։ 1879։ № 410։

Կոնդակ։ որ խաչանշան կրելու իրաւունք կշնորհէ Ներ. քահ. Շմաւոնեանին Փարպի գիւղում ծխական դպրոց հիմնելու համար ունեցած աշխատութեան համար։ Սեպտեմ. 13։ 1879։ № 417։

Կոնդակ Կ. Պոլսի դպրոցասէրների Արևելեան ընկերութեան անդամներին։ որոնք Տարօնի։ Բաղէշի և Բագրևանդի կողմերում դպրոցներ կրանան այժմ և կինդրեն Վեհափառ Հայրապետի պաշտպանողական հովանաւորութիւնն ընկերութեան համար։ Վեհափառ Կաթողիկոսը իւր սրբազան պարտք համարելով օգնել և խրախուսել ամենայն ազգօգուտ ընկերութիւններ։ որոնք անկեղծութեամբ կգօտևորվին ազգի պէտքերը և օգուտը արդիւնաւորելու։ կխոստանայ իւր խնամքը և օժանդակութիւնը։ ասելով այս մասին յառաջագոյն և ընկերութեան ատենադպրին։ որ յատկապէս եկած էր ամառն Բիւրական։ Յովհաննէս Շահնազարեանին։ պատուիրելով միանգամայն ուսման հետ առաւելապէս արդիւնաւորել Հայաստանի մանուկների բարոյական դաստիարակութիւնը բարեբարոյ և բարեկիրթ ուսուցիչների հսկողութեամբ։ Վեհափառ Տէրն օրհնելով և բարեմաղթութիւններ հայցելով ազգին և եկեղեցուն անձնուիրաբար սիրողներին և ծառայողներին և գովելով ընկերութեան գեղեցիկ նպատակը և ուսումնասիրաւալ վաստակները։ կյորդորէ Ս. Հոգու սիրով քաջալերվիլ։ անձնանուէր յարատևելով չվհատիլ գործի դժուարութիւններից։ այլ միաբան սիրով և համակամ ձեռնտուութեամբ միմեանց աջակցած յուսալով Աստուածպաշտութեամբ և բարի նպատակներով վառվածներին օգնական Յիսուսին։ քաջութեամբ տանել ամենայն դժուարութիւններին և յաղթական պսակ ստանալ։ Սեպտեմբերի 25։ 1879։ № 439։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ։

Ի 25 յունիսի 1879 ամի. Առ յայտարարութիւն գերապատիւ Գաբրիել Արքեպիսկոպոսի ծանուցանել նմա թէ հանդամանք և խառն դրութիւնք գործոց ընդարձակ վիճակին Վրաստանի պահանջեն անշուշտ ներկայութիւն նորին գերապատուութեանն։ մանաւանդ զի ի վիճակին Տփխիսու։ այն է ի Փոթի գտանի ծով ընդարձակ և կից նմին Սօխում-խալէ և ի շրջակայսն